ուղիղ ենք ասում, կտեսնեն, որ փոքր պաշտօնեաները քիչ բացառութեամբ դէպի իրենց մեծաւորները ինչ որ ասում են, անում են և գրում են, բոլորը լի է կեղծաւորութիւններով, շողոքորթութիւններով և հազար տեսակ կոմեդիական գրացներով։

Մեր կարծիքով ընթերցողը արդէն գուշակեց, որ մեր միտքն է Հոգևոր դպրոցի վրա միայն մի խօսք ասել. Շուշվա վերջին աստղը *) խաւարելուց, այսինքն մեծապատիւ Շահնեանի դնալուց յետոյ, շատ վարժապետներ, անդամներ, հոգաբարձուք, քահանայք, ժամկոչներ, և ամենատեսակ դատարկ խօսքերով մարդոյ գլուխ ցաւեցնող ու այրուբէնից զուրկ մնացած անձինք՝ ճշմարտութեան այնքան կատարելագոյն աստիճանը հասան, որ այդ աստղի հետ Շուշվա դպրոցի երբեմն ունեցած երջանիկ ժամանակն էլ պախարակեցին։

«Մեղուն» սրանք ամենքն էլ գիտէ. Նա հէնց իր չափիկը փոխելուց փոքր առաջ Շուշվա վրա քարոզում էր «այս դարի մէջ Ջամբեանի ուղղութեամբ դաստիարակութիւն չի լինիլ. Շուշվա վարժապետները մութ տեղ են սիրում, որ մարդկանց աչքին չերևան. Հոգաբարձութիւնը իր պաշտօնը չի ճանաչում. Տիգրան Թագաւորը Հայ քրիստոնեայ է (Շանթարձակեանի յօդուած)։ Ջամբեան և Սալլանթեան քերականութիւնները շատ թանկ են վաճառվում այնտեղ, մի խօսքով դպրոցը ոտից մինչև գլուխ անկարգութեան մէջ է»։ Այս և սրա նման մտքերից շատերը, նա ոչ թէ ուրիշների բերանով էր քարոզում, այլ մեծ մասամբ ինքը իր կողմիցն էր յայտնում. Բայց դու ընթերցող միտքդ բեր, եթէ Արարատ կարդումես, տես Շուշուց նրա գլխին ինչ կայծակներ ու շանթեր թափեցին որոնցից մենք ցանկանում ենք մի քանիսը առաջ բերել այստեղ. այն յօդվածները խօսում էին «Մեղուի» վրա, թէ նա բերանը մեղր առնող և աղան մէջ թոյն ունեցող մեղուներու է նմանվում. գրպարտութեան խնձորները ցաւակցական խրատներով է ոսկեզօծում. զանազան դիմակ երեսն առնելով ստութիւնը ճշմարտութիւն է հրատարակում. մնոտի տղայամտութիւն է անում. Նրա լրագիրը ստութեանց և գրպարտութեանց հանդիսարան է. ինքը դպրոցին առանձին նպատակաւ օձերիմ թշնամի է և ազգին մէջ այսօր Արշակաւան է հանդիսանում և այլն»։ «Մեղուն» ինչպէս ասացինք, չափիկը փոխեց, բայց Շուշվայ ուսումնարանը անփոփոխ մնաց. Լաւ թէ վատ, ինչ որ անցեալ տարի էր, էսօր էլ մի և նոյնն է. Սակայն մի նոր զարմանալի երևոյթք եա,—«Մեղուն» իր չափիկի հետ միտքն էլ է փոխել. Երեկ իր բերանով վատ քարոզածը այսօր լաւ է հրատարակում. Այս նրա բարձրագոյն բարոյականին հարկաւոր է տալ. Նա եթէ բաղդի բերմամբ Տիբեթումը ծնուած լինէր, անկասկած դալայլամայ կընտրուէր. Բայց երէկ ինձ հետ խօսող պարոններից մէկը ասում էր, թէ Մեղուն հաշտուած չի լինիլ իր վրա շանթ թափողների հետ, թէ նա անպատճառ «Մշակին» կծելու համար տպած կլինի (ըստ խնդրանաց իւր բարեկամաց) իւր լրագրի 40 համարում վարագուրեալ Գէորգ Պարտիզպանեանցի նամակը իւր ծանօթութիւններով. Սակայն թէ այսպէս և թէ այնպէս մենք Նրանից գոհ ենք, ըստ որում եթէ նա այլապէս վարուէր մեր Շուշվա մասին, դեռ շատ կուշանար այժմ մեր նպատակը այս է, որ ընթերցասէր ազգայինք համեմայն խակապէս, այս վերջին երկու տարուա մէջ, Շուշվա ուսումնարանի մասին հրատարակուած նամակների մէջ էլած տարաձայնութեանց և հակաճառութեանց հակասութիւնները։

Մենք կրկնում ենք, որ մեր նպատակն է մասնաւորապէս ցոյց տալ մեր համազգիներին ուսումնարանի լաւ թէ վատ դրութիւնը. ուստի հրաւիրում ենք խաւարի մէջ թաղնուած ուսուցիչներից մէկին այսինքն պ. Պարտիզպանեանցին, հանդէս դուրս գալ. Ճշմարտախօսին հարկաւոր չէ Եգիպտական քրմերի նման վարագուրի տակ ծածկուել. ինչ կնշանակէ, նիւթի հեղինակը լինի Գ...եանը, իսկ ստորագրութեամբ անուն վաստակողները լինեն հոգաբարձուք, անդամք, տիրացուք, ժամկոչի տղերք և վերջապէս դեռ նոր ստեղծվելու Գէորգ Պարտիզպանեանցը. Սա արդարութիւն չի. Կարելի է շատերին այս ճշմարտութիւնը անհաւատալի երևի, բայց մենք էզպիսի պարոններին մի շատ հեշտ ճանապարհ ցոյց կըտանք. Թող այդ կասկածող պարոնները նախ և առաջ աշխատեն 1870 թուի Արարատին մէջ գտնել պ. Գ...եանի յօդվածը, յետոյ միւս յօդվածները համեմատեն խոհէմ կերպով նորա հետ, եթէ չգտնեն որ բոլորն մի գրչից է դուրս եկել, չտեսնեն մի և նոյն խօսքերը ամէն տեղ կրկնուած, մի և նոյն ձևերը, ոճերը, դարձուածները բացի մի քանի զօռով եղած փոփոխութիւններից, մենք մեր խօսքը յետ կառնենք։

Երկրորդ անգամ հրաւիրում ենք պ. Պարտիզպանեանցին հանդէս դուրս գալ, լոյս աշխարհ մտնել և պատռել իր վրա դցած ծածկոյթը. Մենք շատ ունինք նիւթեր, ուսումնարանից, Հոգաբարձութիւնից և նրա գործունէութիւնից պ. Շահնեանից յետոյ, 35-ից մինչև 40 վարժապետ փոխվելուց յետոյ և այլն. Եթէ պ. Պարտիզպանեանը մեր առածը կարողանայ փաստերով հերքել և ցոյց տալ հետևաբար որ 280 աշակերտ ունեցող մի ուսումնարան լաւ դրութեան մէջ է, մենք պատրաստ ենք մեր խօսքն յետ առնել. Բայց եթէ այսպէս չլինի, ուսուցիչները յատուկ եղած սահմանից թող չդուրս գան. ժամկոչի տղէն իր տիրացութիւնը թող չմոռանայ, Հոգաբարձութիւնը իր եռանդը թող բազմապատկէ, պ. Գէորգ Պարտիզպանեանը թող նոր ստեղծուի. իսկ «Մեղուն» նոր տարուա սկզբից, եթէ կամենում է, իւր սիրտուկն էլ թող փոխէ, ժամանակը ամէն բան կպարզէ...

Անտօն Մէլիք-Դադայեանց

---

*) Աստղ խօսքը ընթերցողը եթէ չափազանցութիւն համարէ, խնդրում ենք, թող վեր առնէ 1871 թուականի Արարատայ մայիսի ամսատետրը և կգտնէ այնտեղ Սիմէօն քահանայ Տէր Խարայելեանցի ստորագրութեամբ մի յօդված, որտեղ Շուշվայ այժմեան վարժապետներից մէկին կենսատու աղբեր կոչում։

Ա. Մ. Գ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Այս օրերումս Ախալքալաքում մի Հայ լուսաւորչական պանդուխտ երիտասարդ, կամենալով ամուսնանալ մի լուսաւորչական Հայ օրիորդի հետ, Ախալցխայ Հոգևոր կառավարութիւնից թոյլտուութեան թուղթը ձեռին դիմում է տեղւոյս գործակատար բարձրապատիւ Գ...եանցին պսակել նորան, Տէր գործակատարը պսակելու համար պահանջում է նորանից յիսուն (50) րուբ. արծ. Երիտասարդը խնդրում է, աղաչում է, իւր աղքատութիւնից 10 րուբլի ևս տալիս է, բայց խնդիրքը մնում է անկատար։

Երիտասարդը ստիպվում է դիմել դարձեալ Ախլցխայ Հ. կառավարութեան. կառավարութիւնը երիտասարդին միամտեցնում է, որ գործակատարին յայտնուած է, որ նա ձեզ պսակելով, ոչինչ պատասխանատուութեան չի ենթարկվի. Բայց այս ամէնքը անցանում են զուր, երիտասարդը հարկադրված և յուսահատված մի Հ. կաթօլիկ քահանայի ձեռով պսակվում է նորանց եկեղեցում Ալաստան անուանուած գիւղի մէջ։

Ասում են, որ այսպիսի անցք առաջին անգամ չէ, որ պատահում է, թէ որքան ճշմարիտ է այդ «ասում են»ները...մեք չգիտենք, միայն մեք ճանաչում ենք մի երիտասարդ, որ մի այդպիսի պատճառով այժմ պսակված է դուխապօրի աղջկայ հետ։

Ասում են, որ այս գործակատարի պատճառով մի քաղաքացի Ջատկին իւր տունը օրհնել է տալիս մի կաթօլիկ քահանայի։

Մեք կը ցանկայինք, որ ասէին թէ սուտ են ասում։

12 փետրվ. 1873. Սոխակեանց Աբեղէն

ՆԱՄԱԿ ԵԿԱՏԵՐԻՆԱԴԱՐԻՑ

Տեղւոյս ծխական Հոգևոր Մեսրոպեան դպրոցը, որ հիմնուել է 1863 թ. համարեա մինչև 1870 ի վերջերը միայն արական սեռի աշակերտաց ուսում էր տալի, և սա առաւել ընդարձակօրէն, այն է առաւել թուով ուսանելի առարկայք էր աւանդում, քան թէ կային միւս ծխական դպրոցներում։

Այս վերջի թուականից յետոյ յիշեալ դպրոցի տեղական շինութիւնը ընդարձակելով՝ օրիորդաց համար ալ մի Նախապատրաստական դասարան բացուեցաւ, և փոքր ժամանակից յետոյ յաջորդեցին սորա առաջին և երկրորդ դասարաններն ալ, ուր ուրախութեամբ սրտի զգալի կերպով նկատվում է, որ այս վերջինները ոչ սակաւ յառաջադիմութիւն են ցոյց տալի, քան թէ առաջինները։

Եւ որովհետև թէ դպրոցիս նիւթական ընդարձակութեան, և թէ երկսեռ աշակերտաց օր քան զօր բազմանալու պատճառաւ, բնականաբար հարկ կար դրամական միջոցներն ալ աւելացնել, գոնեա չքաւորների անհրաժեշտ համարուած պիտոյքը գլխաւ հոգալու. ուստի երբ ներկայ 1872 թ. յունիս ամսում տարեկան հարցաքննութիւնը վերջացաւ, դպրոցի Հոգաբարձութիւնը մասնաւոր հրաւէրքով, առ հասարակ քաղաքիս երկսեռ Հայ բնակիչքը հրաւիրեց ներկայ լինել ի դպրոց պարգևաբաշխութեան օրում, ուր սովորական ճառեր կարդացվելուց և նոյն տարւոյ աշխատութեանց երեխայքը հանդիսաւոր կերպով ընդհանուր հանդիսականաց ցոյց տրվելուց յետոյ, առաջարկվեցաւ, մասնաւորաբար ներկայ գտնվող կանանց, յանձն առնուլ անուանիլ խնամակալուհիք չքաւոր օրիորդաց դպրոցին, հատուցանելով իւրաքանչիւր տարի երեքական ռուբլի։

Մեծ սիրով և ցանկութեամբ ընդունվեցաւ առաջարկութիւնը, և անմիջապէս քսանէն առաւել կանայք ստորագրեցին, (որոց համեստութիւնը չթոյլատրեց իւրեանց անունները այստեղ նշանակել տալու,) և դեռ մի շաբաթ չանցկացած՝ գործով ալ կատարեցին նոյնը։

Արդարև գովութեանց արժանի ձեռնարկութիւն մի է սա, նա մանաւանդ նայելով տեղւոյս Հայ դերդաստանների սակաւաթիւ լինելը՝ այսքան մի նշանաւոր քանակութիւն արդարև անյուսալի է ձեռք բերել. Ցանկալի էր որ ուրիշ տեղեր ալ հետևէին այս գովելի և միաժամայն ազգաշահ օրինակին։

Վերոյիշեալ խնամակալուհիք մտադիր են փոքր ժամանակից յետոյ ընտրել իւրեանց մէջէն երկու Հոգաբարձուհիք, որպէս զի իւրեանց բարի ձեռնարկը առաւել ապահովապէս և կանոնաւորապէս իւր նպատակին հասանի։

Մ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 13-ին, երեկոյեան 7½ ժամին Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի դիմաց գտնվող իշխ. Մուխրանսկու խանութները հրդեհ ընկան. թէ քաղաքիս հրդեհ հանգցնողների, թէ մասնաւոր անձանց կողմից բոլոր ջանքը երկար ժամանակ իզուր էր երևում, որովհետև այրվող ապրանքը յարմար էր սաստկացնել հրդեհը՝ այրվում էին կահ—կարասիք (մեբել). Այդտեղ մենք համոզվեցանք, որքան անկատար ու նահապետական են մեր քաղաքի մէջ ձեռք բերած հրդեհ հանգցնելու միջոցները ու գործիքները... Վերջապէս կէս գիշերին կարողացան տիրապետել կրակը, բայց կորուստը, ինչպէս ասում են, խանութատէրերի համար հասնում է մինչև 17 հազար ռուբլի, չը նայելով որ կահ—կարասիքը մասամբ ազատված են։

⁂

Ներքին գործերի Մինիստրի հրամանով, փետրվարի 1-ին, արգելվեցաւ Русскія Вѣдом. լրագրի առանձին համարներով ծախելը։

⁂

Բագուի քաղաքացիք ի յիշատակ Կովկասի փոխարքայի տասն տարվայ կառավարութեան տարեդարձի, նուիրեցին քաղաքի արդիւնքների մնացորդ գումարից տարեկան 4000 ռուբլի քաղաքի մէջ մի հիւանդանոց հիմնելու համար։

⁂

Кавказъ լրագրի մէջ կարդում ենք, որ Կովկասեան Գլխաւոր Կառավարութեանը շատ անգամ ուղղած են եղել գանգատներ տանուտէրերի և զանազան բեռներ տեղափոխող անձերի կողմից, որ ճանապարհի մօտ գտնվող կալվածատէրերը փող են առնում ինքնակամ կերպով յիշեալ անձերից, ամեն անգամ, երբ սայլը փոքր ինչ շեղվում է ճանապարհից, կամ սուլուղներին (փօղօսայ) է մօտենում. Այժմ Գլխաւոր Կառավարութիւնը քարվանատէրերին, սայլատէրերին և չարվադարներին պաշտպանելու համար, դիմեց պ. պ. Գուբերնատորներին, խնդրելով նրանցից ուշադրութիւն դարձնել, որ ճանապարհների լայնութիւնը որոշված լինի, այսինքն որոշելով յիշեալ անձանց անվարձ երթևեկութեան-համար փօստի ճանապարհի համար 20 սաժէն լայնութիւն, իսկ կողմնակի ճանապարհների համար 3 սաժէն, նըշանակելով տեղ տեղ և սուլուղները. Կալվածատէրերը ընդհանուր համաձայնութեամբ սայլատէրերի, քարվանատէրերի և այլն անձանց հետ, սահմանում են վարձ ամբողջ օրվայ իջևանի համար իրանց հողի վրա և երբէք չը պիտի պահանջեն վարձ ոչ սուլուղների, ոչ էլ նրա համար, որ սայլը անցնում է կալվածատէրերի երկրի երկայնութեամբ եղած ճանապարհով. Իրանց կողմից կալվածատէրերը, օրէնքի զօրութեամբ, պիտի պատեն իրանց կալվածները ցանկապատով, կամ ճանապարհի երկայնութեամբ կանաւներ փորեն։

⁂

Մենք հաստատ գիտէինք, որ «Մեղու Հայաստանի» լրագիրը կը պատասխանէ այն, ինչ որ և պատասխանել է իր 6-որդ համարում թէ ինչի մենք չարտատպեցինք յօդվածի շարունակութիւնը, որտեղ ասված է, թէ թարգմանական գրվածները կարելի է տալ բեմի վրա, բայց պէտք է նրանց այնպէս թարգմանել, որ յարմարեցրած լինեն մեր կեանքին. Յօդվածի այն տողերը, որ մենք յիշել էինք, գոնէ այն պարզ (թէև սխալ) միտք ունեին, որ թարգմանական գրվածները բեմի վրա անօգուտ են.... իսկ այդ խօսքերի մէջ բոլորովին միտք չը կայ. Մենք թէ և համոզված ենք (?) որ „Մեղուն" հասկանում է որքան անհնարին է յարմարեցնել, օրինակ, մի օտար կեանքի մասնաւոր հատուածական երևոյթը, կամ յարմարեցնել մեծ հեղինակների գրվածները, ինչպէս Շէկսպիր, Գեօթէ, Շիլլէր... բայց միթէ «Մեղուի» խմբագիրները չը գիտեն, որ օրինակ թղթախաղը այնպէս ընդհանրացած երևոյթ է մեզանում և այնքան յատուկ է մեր կեանքին, որ էլ հարկաւորութիւն չը կայ յարմարեցնել այդ գաղափարը. Հարկաւոր է մեր խօսքերի ճշմարտութեան մէջ համոզվելու համար՝ մտնել մի որ և է կրթված շրջան Թիֆլիսում, և մանաւանդ բարձր ուսում ստացած և առաջադէմ մարդկանց ընկերութիւնը յաճախել....

⁂

Ինչպէս մենք քանի մի անգամ հաղորդած էինք ընթերցողին, տեխնիկական ընկերութենից մշակված արհեստագործական ուսումնարանի մասին պրօէկտը քննելու համար նշանակվեցաւ Քաղաքային վարչութեան կողմից մի մասնաժողով. Բայց մինչև այժմ մենք չենք լսել, որ յիշեալ մասնաժողովը մի նիստ անգամ ունեցած լինէր։

⁂

«Մշակի» անցեալ 6-որդ համարում վերջացաւ պ. Վ. Շահվերդեանի «Նախագիծ տարրական ուսումնարանների համար» անունով յօդվածի տպագրվելը. Այդ յօդվածի վրա ընթերցողի ուշադրութիւնը կրկին դարձնելով, ուրախ ենք, որ առիթ ունենք յայտնելու, թէ մեզ լուր է հասնում որ պ. յօդվածագիրը իր վերա ուշադրութիւն դարձրեց Ներսիսեան դպրոցի հոգաբարձուների և յիշեալ յօդվածը նրանց համակրութիւնը գրաւեց. Հոգաբարձուները, ինչպէս լսում ենք գրաղված են այս րօպէիս դպրոցիս պատրաստական դասատան ուսման կողմից կատարեալ վերանորոգութեամբ։

⁂

Правительст. Вѣст. լրագրում կարդում ենք, որ Նորին Բարձրութեան Կովկասի փոխարքայի տասն տարվա կառավարութեան տարեդարձի օրը, դեկտեմբերի 6-ին 1872 թուի, Ելիսավէտպօլու հասարակութեան կողմից նուիրած 3000 ռուբլի քաղաքի մէջ արհեստագործական ուսումնարանը հիմնելու համար, Նորին Մեծութիւն ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ բարեհաճել է հրամայել՝ ընդունել և շնորհակալութիւն յայտնել Ելիսավէտպօլու հասարակութեանը, արած նուիրատուութեան համար։

⁂

Մենք ստացանք հետևեալ ծանուցումն Թիֆլիսի Բարեգործական Ընկերութեան կողմից.

Թիֆլիսի բնակիչներին լաւ յայտնի է, որ քաղաքիս Բարեգործական Ընկերութեան գլխաւոր նպատակներից մինն է ձրիաբար դաստիարակութիւն և կրթութիւն ամենաչքաւոր դասի երեխաների, և որ միջոցները այդ նպատակին հասնելու համար, միշտ չեն նպաստում Ընկերութեան ձգտումների իրագործմանը, կախված լինելով նրանցից անկախ պատահական հանգամանքներից. Այդ տեսակ միջոցները մինչև ցայժմ բարերար անդամների դրամական տուրք էին և զանազան վիճակախաղներից պարահանդէսներից, ներկայացումներից, կօնցերտներից արդիւնքը։

Այժմ կամենալով հաստատել ըստ կարելոյն հաստատ և միակերպ մուտք կամաւոր նուէրների, ընկերութեան նիւթական միջոցները աճեցնելու, և նրա գործունէութիւնը հաստատ սկիզբների վրա հիմնելու համար, Ընկերութիւնը մտադրած է, Կայսրութեան միւս նշանաւոր քաղաքների օրինակով, Թիֆլիսի մէջ էլ մտցնել „կօպէկանոց նուիրատուութիւնը, որի նպատակով Ընկերութեան անդամները յայտնի ժամանակին առանձին տափերով (կրուժկի) Քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովից ընտրված անձերի մասնակցութեամբ, պիտի մանգան ամեն մի տուն, խնդրելով յանուն անօգնական որբերի նուիրել մի կօպէկ բարի գործի համար։

Յայտնելով սորա մասին հասարակութեանը, բարեգործական Ընկերութիւնը յուսով է, որ Թիֆլիսի բնակիչները, իրանց յատուկ համակրութեամբ, դէպի բարեգործութիւնը արձագանք կը տան նրա այդ հրաւէրքին, յիշելով որ տուողի ձեռքը չի աղքատանայ և որ ամեն տուրք բարի է և ամէն պարգև կատարեալ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՅԺՄԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Կար ժամանակ, երբ Գերմանիան բաժանված էր, թոյլ էր, յուսահատված էր, ճնշված լինելով մի կողմից քաղաքական բռնաւորութեան տակ, միւս կողմից հառաչում էր թէ մտաւոր թէ հոգևոր ստրկութեան տակ։ Այդ ուղղութեանը համապատասխան էր գրականութեան մէջ Տօղէնհաուէրի փիլիսոփայութիւնը, որ այց էր տալիս մարդը, որպէս օրգանիզմ էակ, ի վարդապետութիւն որ արմատացնում էր րտերի մէջ յուսահատութիւն..: Համապատասխան քաղաքական կեանքին և զուընթաց նորա այլ և այլ շրջանների հետ, Գերմանիայի գրականութիւնը այլ կերպարանք է ստանում Կանտի ստեղծվածներում: Նորա գրվածները շնչում են յոյսով, րձր, ուրախ իդէալականութեամբ… այդ ժամանակից է սկսվում Գերմանիայի քաղաքական վերածնութիւնը, և գերմանացին սկսում է ինքն իր ուժերին հաւատ ընծայել…

Գերմանիայի արդեան մտաւոր կեանքի և հասարակական կարծիքի մէջ նշմարվում է մի շատ նշանաւոր փոփոխութիւն:

1866 թուի և մանաւանդ 1870 թուի անցքերից յետոյ, գերմանական ազգի մէջ այդ հաւատը դէպի իր սեփական ուժերը այդ ինքնահաւան յոյսը դուցէ չափ ու սահման անցաւ: Շատ ժամանակ չէ, որ Գերմանիայի և մանաւանդ Պրուսիայի օրագրութիւնը արհամարհական ժպիտով նայում էր Աւստրիայի հիմնարկութիւնների վրա, թէև յարգանքով էր խօսում Ֆրանսիայի քաղաքական կազմակերպութեան վրա, համարելով Ֆրանսիայի հիմնարկութիւնները հետևանք նորա պատմական պայմանների, բայց անյարմար էր համարում նոյն հիմնարկութիւնների գործ ածելը գերմանական ժողովրդի մէջ: Շատ ժամանակ չէ այն կուսակցութիւնը, national—liberale անվանված (ազգային ազատամիտ կուսակցութիւնը) րի պարագլուխը համարվում էր ինքն իշխան Բիսմարկը, հրապարակապէս իրան էր յայտնում Գերմանիայի միութեան գործի փառքը…

Իսկ հիմի…հիմի նոյն Պրուսիայի ինքնահաւան օրագրութիւնը, նոյն հպարտ ազգային-ազատամիտ կուսակցութիւնը բաւականացուցիչ խօսքեր չեն գտնում, որ կատարելապէս արտայայտեն իրանց դժգոհութիւնը, ր ցոյց տան իրանց բոլոր անբաւականութիւնը և արհամարհանքը դէպի Գերմանիայի թերի հիմնարկութիւնները…: Երեկվայ ինքնաբաւականութիւնը փոխվեցաւ յանկարծ դէպի անասելի դժգոհութիւն Գերմանիայի ամբողջ հասարակական կազմակերպութեան վերաբերութեամբ:

Բիսմարկը արձակվեցաւ պաշտօնից և րա տեղը մինիստրութեան նախագահ նշանակվեցաւ գեներալ Ֆոն-Րոօն:

Ասում են որ Բիսմարկի պաշտօնից հեռանալը Կայսրի հետ անձնական յարաբերութիւնների հետևանքն էր: Կայսրի երրորդ ղբայրը փոխանվել է: Ինչպէս յայտնի է րինց Ֆրիդրիխ Վիլհելմը իշխան Բիսմարկի նհաշտ թշնամի էր: Հաւանական է որ այդ ահը դառնութեամբ լցրեց Կայսրի սիրտը պատճառ եղաւ նրա և մինիստրութեան խագահի մէջ սառն յարաբերութիւնների: նչպէս ամեն ծերերը նա սիրում է խօսել, բայց սիրում լսել իր մօտիկ վախճանի վրա ակնարկութիւն անգամ: Դրուստ, ինչպէս կուրծքով ւանդը, ասում է „Neue Freie Presse“, որ ն նպատակով կրկնում է թէ շուտով պիտի անի, որ սպասում է թէ իր վրա կը ծիծաղեն և կը հաւատացնեն որ նա բոլորովին առողջ է և դեռ երկար ապրելու է,—այնպէս և ծերերը, մանաւանդ երկրի կառավարիչները, որք սիրում են երբ նրանց ասում են է նրանք յաւիտենական են,—անչափ նեղանում են ոչ թէ միայն երբ ակնարկութիւն անում նրանց մահի վերա, բայց մինչև գամ երբ մի որ և երևոյթ նրանց անակնկալ երպով յիշեցնում է նրանց վախճանը…:

Կայսր Վիլհելմի վրա սորա նման հարանական ծանր տպաւորութիւն արած կը է եր եղբօր մահվան անցքը:

Եւ ահա ազգային-ազատամիտ կուսակցութիւնը, որ Գերմանիայի միութենից և յաղթութիւններից յետոյ Բիսմարկին մինչև երկինքն էր բարձրացնում, ու ինքն իրան ամենակարող և Գերմանիայի ստեղծող ուժ էր համարում,—տեսնում է ինչպէս ընկնում է իր առաջնորդը, դուցէ անձնական յարաբերութեան պատճառով և իրան մխիթարելու համար նախադուշակում է այդ անկման պատճառով ամբողջ Գերմանիայի կորուստը:

Բայց և Բիսմարկին յատուկ չէր ծայրայեղ ազատամտութիւնը, և նա շատ լաւ գիտէր իր կամքը զօռով ընդունել տալ: Բայց այնուամենայնիւ նա այնքան հասկացող էր, որ ճանաչում էր պետութեան թշնամիներին և բարեկամներին, հասկանում էր եզուիտների հետ անողորմ պատերազմի անհրաժեշտութիւնը, հասկանում էր և ուրիշ մի ժամանակակից պահանջմունք,—այն է կառավարութեանը ազատամիտ ընթացք տալու անհրաժեշտութիւնը:

Ճշմարիտ է Ֆոն-Րոօնը աւելի էլ համակրում է անսահման միապետական համոզմունքներին, աւելի էլ, ինչպէս զինուորական, հնազանդ կը լինի կառավարութեան առաջ և կամակոր ստորադրեալների հետ,—բայց նա դարձեալ օրինաւոր կրթված, լուսաւորված մարդ է, և կարող է շատ շատ մասնաւոր դէպքում բանութիւն գործելու, բայց երբէք ընդունակ չէ կոյր և յիմար յետադիմութեան…: Պրուսիայի և Գերմանիայի համար առաջադիմութիւնը դարձել է՝ ստիպողական անհրաժեշտութիւն: Դուցէ Ֆոն-Րոօնը այնքան յօժարութեամբ չի ենթարկվի առաջադիմութեան ընթացքին, որքան Բիսմարկը, բայց այնուամենայնիւ ստիպված կը լինի նրան ենթարկվելու:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Հետազօտելով Պարսկաստանի խիստ մօտաւոր անցեալը, մենք նշմարում ենք մի տխուր երևոյթ.—ժողովուրդը ստրկացած աւատական իշխանների հարստահարութեանց ներքոյ. գաւառական դատաւորների մենավաճառութիւն, այս կամ այն նահանգը կաշառքով վարձել կառավարութիւնից, և ծծել բնակչաց արդիւնաբերութեան բոլոր ուժը: Հալածմունք իսլամին չը պատկանող ազգերի: Բարձրագոյն Դրան վէզիրների անընդհատ միմեանց հետ ինտրիգայներ և դաւաճանագործութիւնք միմեանց ձեռքից զանազան օգուտներ խլելու: Եւ Շահի անձնաւորութիւնը, այդ բոլոր անկարգութեանց մէջ, երևում է որպէս խաղալիկ, հրապուրուած շողոքորթող և խաբեբայ գրանիկներից:

Մի այդպիսի հոգևվարք դրութիւնը Պարսկաստանի անշուշտ կը տանէր նորան դէպի կործանում, եթէ Պարսկաստանի գահի վերայ չերևնայր նորին Մեծ. Նէսրէդդին-Շահը: Նա առաջին եղաւ, որ մոլլաների մոլեռանդութեան ընդդէմ, սկսաւ պաշտպանել քրիստոնեաների, հրէաների և մահմետականութեան չը պատկանող այլադաւանների իրաւունքը, կարգելով նոցա պաշտպանութեան համար առանձին պաշտօնակալներ, որք կոչվում էին սարփարաստներ: Նա առաջին եղաւ, որ իր դեսպանների և հիւպատոսների միջնորդութեամբ, սկսաւ մօտ յարաբերութիւններ ունենալ եւրոպական պետութիւնների հետ, և այդպիսաւ տուեց նա արտասահմանեան փոխանակութեանը ընդարձակ շրջան, մտցրուց իր տէրութեան մէջ մի քանի եւրոպական հիմնարկութիւններ, որպիսի են ուսումնարաններ Թէհրանում և Թաւրիզում, հեռագրութիւն, կառավարութեան գործարան Թէհրանում, երկաթուղի և նոտարիուսական կարգ (սաբիթ գիվանխանայ) գլխաւոր քաղաքներում: Վերջապէս նա առաջինը եղաւ, որ մի խումբ պատանիներ Ֆրանսիայ յուղարկեց ուսանելու և եւրոպական գիտութիւնները և արհեստը իւր աշխարհը բերելու: Նորին Մեծութեան Շահի մի այդպիսի ձգտողութիւնները դէպի քաղաքակրթութիւնը և վերանորոգութիւնը իւր տէրութեան, թէև շատ անգամ հանդիպում էին զանազան արգելքների և ընդդիմադրութեան մոլլաների և նոցանից գրգռուած խաւարասէր ամբոխի կողմից, բայց վերջինները մեծ մասամբ կորուսին իւրեանց ուժը, երբ անցեալ տարում առաջին վէզիրի տեղը բռնեց Սադրէզամը և հայազգի Միրզա-Մելքոմ-խանը բարեկարգիչ տէրութեան կարգուեցաւ:

Վերոյիշեալ երկու հանճարների առաջին ջանքն եղաւ որքան կարելի էր և ժողովրդի դրութեանը տանելի, մտցնել տէրութեան մէջ մի քանի նոր սահմանադրութիւններ և մաքրել բարձր Դուռը հին վէզիրներից: Դոցա օրով շատ գաւառներից վերցուեց թուվուլաթը, այն ժողովրդին մաշող և նորա արիւնը ծծող սիստեմն, որով մի պաշտօնակալ իւր ռոճիկի տեղ ստանում էր մի գիւղի, կամ մի ամբողջ մահալի հասոյթը, անխնայաբար կողոպտելով բնակիչներին: Դոցա օրով կնքուեցաւ Հնդկա-Պարսկական երկաթուղու պայմանը անգլիացւոց հետ: Դոցա օրով իւր հարեմի պատերի մէջ փակուած Պարսից Արքան, շարիաթի կանոններին հակառակ,1) համոզուեցաւ ոտքը դուրս դնել իւր երկրի սահմանից օտար հողի վերայ, և եւրոպական լուսաւոր աշխարհին այցելութիւն գործել:

Թէհրանի „Իրան“ լրագիրը իւր 51 համարի մէջ տուեց մեզ մի քանի այլ ուրախացուցիչ տեղեկութիւններ, այն է, որ վսեմափառ Սադրէզամը, հիմնելով Թէհրանում կառավարութեան խելացի և մտածող պաշտօնակալներից մի կենդրօնական խորհրդարան (կաբինետ) տէրութեան գլխաւոր գործերի մասին խորհելու, և նոցա գործունէութեան ծրագիրը Ն. Մեծ. Շահին ներկայացրաւ: Նորին Մեծ. հաճութեամբ ընդունելով ծրագիրը և նորան իւր արքայական կնքով վավերացնելէն յետոյ, գրում է այդ տողերը Սէդրէզամին, „Սէդրէզամ! Նախարարաց խորհրդարանի ծրագիրն, որ հաղորդեցիք ինձ, շատ հաւանեցայ, և Աստուծով շուտով 'ի գործ դնելու կը ջանաք այն, զի որքան յետաձգուի, այնքան վնասաբեր կը լինի տէրութեանը:“ 20 շաբանի 1289 հիջրէթի:

Բացի սորանից Շահը բարեհաճել էր գրել հետևեալ հրովարտակը. „Արդէն սադրազէմութեան վերաբերեալ կանոնադրութիւնը մենք հրամայեցինք 'ի գործ դնել, վասն զի մեր յաւիտենական տէրութիւնը մի որոշ պաշտօնական կառավարութեան ձևի հարկաւորութիւնը ունէ. մի այնպիսի ձևի, որ պետական տէրութեանց (եւրոպական) համապատասխան է, մանաւանդ այս ժամանակ, որ մեր թագաւորութեան պաշտօնեայքը պատրաստվում են ուղևորուել դէպի Եւրոպայ“:

Նորին Մեծ. Շահի Վիեննայի աշխարհահանդէսին այցելութիւն գործելը առիթ տուեց իւր վուզարաթի (մինիստրութեան) մէջ նոր փոփոխութիւնների: Այսինքն իւր տէրութեան կառավարութեան գործերը ինն վէզիրների մէջ բաժանել.—1. ներքին գործոց վէզիր. 2. արտաքին գործոց. 3. զինուորական վէզիր. 4. ելևմտական. 5. արդարութեան. 6. լուսաւորութեան 7. շահուց (Փէփախք). 8. վաճառականութեան և երկրագործութեան. 9. արքունի նախարար:

Վերոյիշեալ ինն վէզիրների գլխաւորութիւնը յանձնվում է Սէդէրէթին, որի ներկայացուցիչն է Սէդրէզամը:

Լ—Ի ԷԼ. ՔԵԶ ԿՐԻՏԻԿԱՅ

Արարատ ամսագրի անցեալ տարուայ ժա. և ժբ. երրորդ համարներում կարդացի „Թէ ո՞ւր են Աւարայր և Տղմուտ“ վերնագրով պ. Գալուստ Շէրմազանեանի մի երկար և ձիգ քննադատութիւնը պարոն Րաֆֆիի Պարսկաստանի ուղևորութեան երկրորդ նամակում յայտնած մի կարծիքի դէմ, որով պարոն ճանապարհորդը յիշում է մի քանի ժողովրդական աւանդութիւններ Վարդանի, նորա պատերազմի և Աւարայրի դաշտի մասին.

Պարոն կրիտիկոսը,—իւր միտքը հաստատելու համար, անխափ կերպով իւր քննադատութեան մէջն է կոխում բոլոր ուսած և սերտած խօսքերը Խորենացւէն, Ղազար Փարպեցւոյ, Ինճիճեանից, Եղիշէից, Այսմաւուրքից, Չամչեանից և այլ պատմագրութիւններից.

Յիշեալ պատմագրութիւններից բերած վկայութիւնները այնքան խառնիխուռն և միմեանց հակառակ են, որքան չէ վերաբերում և ոչինչ կապ չունի նորա քննադատութեան հետ պարոն կրիտիկոսի կեանքի ամբողջ պատմութիւնը, այսինքն 1865 թուի Թիֆլիսի անկարգութիւնը, Մարուայ Ալիխանի որդւոյ հարսանիքը, իւր սպարդութիւնը խանի որդւոյ հետ, Ջաւօի և Գասպարի վիրաւորուիլը, պար եկող Մութրաֆի սպանուիլը, Աէմձօն վարդապետի հէքիաթները, Ռուսաց և Պարսից պատերազմ . . . և այլն և այլն . . . պարոնը դեռ ևս շատ բաներ է ունեցել գրելու, ափսոս որ չափն մոռացած է եղել....

Իսկ մեք կը բաւականանք այնքանով միայն, որքան պարոն կրիտիկոսը կարողացել է գրել. թէև նորա գրուածքի խաօսի մէջ ոչ միայն չփոթուիլ կարող է ամէն մի ընթերցող, առանց մի որոշակի գաղափարի ամբողջութիւն դուրս բերելու նորա խօսքերէն, այլ չփոթվում է ինքը գրողը, երբ նրկատում ենք, որ նա շատ տեղերում ինքն հակառակում է իւրեան, որը կաշխատենք ցուցանել մեր ընթերցողներին.

Միայն պէտք է խոստովանած, թէ մեք շատ հեռու ենք այն նպատակից, որ աշխատենք ապացուցանել, թէ որքան ուղիղ, կամ սխալ է պարոն Րաֆֆին իւր կարծիքի մէջ. Աւարայրի դաշտի Խօյ քաղաքի, այսինքն Գուլյաղի մօտ լինելոյ մասին. Որովհետև ինքը ճանապարհորդը վճռողականապէս չէ հիմնվում իւր կարծիքի վերայ, այլ նա յայտնում է մի քանի կենդանի աւանդութիւններ, ասելով „Ես նայեցայ, խիստ հաւանական է մտածել, թէ Վարդանանց պատերազմը, կամ սորոյն Վարդանայ նահատակութիւնը եղել է վերոյիշեալ մատուռի մօտակայքում, այսինքն Ղօթուր գետի ափերու մօտ, որ կարծվում է պատմական Տղմուտ. Թէպէտ Հայերի շատերի կարծիքն այդ է, պատերազմի Մակուայ դաշտերում լինելը, բայց այդ կարծիքը տարակուսական է. Որովհետև անտեղ ոչ մի ընդարձակ դաշտ չէ յիշեցնում մեզ Աւարայրին, և ոչ մի գետ Տղմուտ. Բայց առաւել հաւանական է, թէ գլխաւոր պատերազմը եղել է Գուլյաղի հարաւային կողմում, այն նուիրական աղբիւրների, և այն բոլոր աւանդութեան նշանով ծածկոտեալ քառաժայռի մօտակայքում, ուր փոքր ինչ Ղօթուր գետը, իւր պղտոր ջրով, լիակին և ցեխոտ յատակով, ձևացնում է մի հեղեղատ, որին այլ անուն անհնարին էր տալ, քան անունն Տղմուտ. Եւ ընդարձակ դաշտը, այնպէս զուարթ և անապատ, յիշեցնում է որոշակի Աւարայրը . . . .

Պարոն Շէրմազանեանը, վերոյիշեալ խօսքերի ճշմարտութիւնը հերքելու համար, թափ տալով ամբողջ Հայ պատմագրութիւնը, դուրս է բերում զանազան վկայութիւններ, իբր թէ իւր միտքը հաստատելու Աւարայրի դաշտի պարոն Րաֆֆիի ցոյց տուած տեղում չը լինելու մասին, չը նայելով որ նոյն իսկ վկայութիւններով նա հաստատում է պարոն Րաֆֆիի կարծիքը.

Պ. Շէրմազանեանը, հիմնուելով Ղազար Փարպեցւոյ (երես 8) և Չամչեանի (հատ. բ. երես 67) խօսքերի վերա, ասում է. „Մեր պատմիչներն յայտնի ասում են թէ Պէնտէկօստէի մեծ տօնի ուրբաթ օրը Արտաշատ քաղաքէն այսինքն Խորվիրապէն սուրբ Վարդանը վեր առաւ Հայերի գունդն և հասաւ Արտազ գաւառի Աւարայր գիւղը կամ դաշտը, և շաբաթ օրը պատերազմը արին, այսինքն մին օրվան ճանապարհ“.

Ընդունելով առ ժամանակ յիշեալ խօսքերը իբրև ճշմարտութիւն, մեք հասանում ենք մի այդպիսի եզրակացութեան, թէ պ. կրիտիկոսը Հայոց բանակի արշաւանքի երկու ծայրերը դնում է Արտաշատէն կամ Խորվիրապէն սկսեալ մի օրուայ ճանապարհի հեռաւորութեամբ մինչև Արտազ գաւառի Աւարայր գիւղը, որ համարում է վերջին կէտը, ուր վերջացած է պատերազմը.

---

1) Շարիաթի օրէնքով իսլամի թագաւորին արգելուած է ոտք կոխել օտար հողի վերայ, որ չէր պատկանում նորան.